Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԵՐՄԻՆԵ ԲԼԲՈՒԼՅԱՆԻ Ք. ՊՐԱՀԱ (ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Հերմինե Բլբուլյան

2. Զբաղեցրած պաշտոնը. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնի ավագ մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Չեխիայի Հանրապետություն, ք. Պրահա, 4-8 սեպտեմբերի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. ՅՈՒՆԻՔՕ (UNICO) կազմակերպություն և Վիշեգրադյան միջազգային հիմնադրամ (International Visegrad Fund)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). «ImpactSprint» հետազոտությունից մինչև արտադրանք» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վերապատրաստման դասընթացին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները.

- Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է Հայաստանի, Վրաստանի, Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Սլովակիայի ակադեմիական և հանրակրթական հաստատություններից մի շարք մասնագետների փորձի փոխանակում,
- Ծրագրի նպատակն էր նպաստել նորարարությունների և գիտելիքահենք տնտեսության ձևավորման վերաբերյալ գիտելիքների փոխանցմանը և այդ ոլորտում փորձի փոխանակմանը,
- Ոչ ակադեմիական և կամ մասնավոր սեկտորի ներգրավվման մեթոդները,
- Ծրագրի ազգային ներկայացուցիչների միջև հաղորդակցության կարևորությունը, այս ոլորտում ներդրված նորույթները և ձեռնարկված միջոցառումները,

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվել է ոչ ակադեմիական սեկտորի Ծրագրում ներգրավվման կարևորությունը, տարբեր երկրների ներկայացուցիչներ ներկայացրել են իրենց երկրում այս ուղղությամբ իրականացված միջոցառումները և հաջողված փորձը:

Այցելել եմ Չարլզ համալսարան, որտեղ մասնակցել եմ «Ինչպես են համալսարանները զարգացնում ձեռնարկատիրական մտածելակերպն ուսանողների և

հետազոտողների մոտ» խորագրով հանրային քննարկմանը, որի ընթացքում ծանոթացել եմ թե ինչ տարբերակներով են մեծ թվով համալսարաններ իրենց ուսանողներին և հետազոտողներին տրամադրում ձեռներեցության վերաբերյալ գիտելիքներ և աջակցություն:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք բերված գիտելիքների հիման վրա տրամադրել խորհրդատվական աջակցություն գիտնականներին և հետազոտողներին զարգացնելու իրենց հմտությունները, որոնք կարող են նպաստել գիտական գաղափարները կիրառական արտադրանքի վերածելու գործընթացին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Շարունակել համագործակցությունը, մասնավորապես, տեխնոլոգիաների փոխանցման գործընթացում աջակցության տրամադրման և այդ ոլորտում եղած փորձի փոխանակման ուղղությամբ, ինչպես նաև դրանց իրականացման գործում ազգային ներկայացուցիչների ակտիվ ներգրավվածության խթանում:

13 սեպտեմբերի, 2023 թվական

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՀԵՐՄԻՆԵ ԲԼԲՈՒԼՅԱՆ